

## Արձանագրություն Սոցիալական Հեռավորության համար. Հավելված Ա

**Վերջին փոփոխություններ.** (Փոփոխությունները նշված են դեղին գույնով)

3/5/21.

- Թարմացվել է՝ ավելացնելու լեզի ծառայություն՝ կապված հաստատություն մուտք գործելիս աշխատակիցների և այցելուների մուտքի ստուգումների հետ և փոխելու <<դեմքի ծածկոց>> տերմինը <<դիմակի>>:

Բիզնեսի անունը.

Հաստատության հասցեն.

Առավելագույն Ձբաղվածությունը՝ ըստ  
Հրդեհային Օրենսգրքի.

Հանրության համար բաց տարածության  
մոտավոր ընդհանուր քառակուսի ոտնաչափ.

Բոլոր հաստատությունները ենթարկվում են այս **արձանագրությանը** և պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց հաստատությանը կամ տարածքին:

Հաջորդող արձանագրություններում «տնային տնտեսություն» տերմինը սահմանվում է որպես «միասին՝ մեկ կենդանի միավոր ապրող անձինք», և չպետք է ներառի ինստիտուցիոնալ խմբի կենցաղային իրավիճակներ, ինչպիսիք են հանրակացարանները, եղբայրությունները, համայնքապետությունները, վանքերը, միաբանությունները, կամ բնակելի խնամքի հաստատությունները, և չպետք է ներառի այնպիսի առևտրային բնակության պայմաններ, ինչպիսիք են գիշերօթիկ տները, հյուրանոցները կամ մոթելները:<sup>1</sup> «Աշխատակազմ» և «աշխատող» տերմինները ներառում են աշխատողներին, կամավորներին, պրակտիկանտներին և վերապատրաստվողներին, գիտնականներին և բոլոր այլ անհատներին, ովքեր աշխատանքներ են իրականացնում տարածքում: «Այցելուներ» կամ «հաճախորդներ» տերմինները պետք է ներառեն հասարակության անդամներին և այլ անձանց, ովքեր անձնակազմի անդամներ, կամ աշխատողներ չեն ժամանակ են անցկացնում ձեռնարկությունում կամ տարածքում: «Տարածք» և «հաստատություն» տերմինները երկուսն էլ վերաբերում են շենքին, տարածքին և հարակից ցանկացած շենքին կամ տարածքին, որոնցում իրականացվում են թույլատրելի գործողություններ:

<sup>1</sup> Los Angeles County Code, Title 22. §22.14.060 - F. Family definition. (Ord. 2019-0004 § 1, 2019.)  
[https://library.municode.com/ca/los\\_angeles\\_county/codes/code\\_of\\_ordinances?nodeId=TIT22PLZO\\_DIV2DE\\_CH22\\_14DE\\_22.14.060F](https://library.municode.com/ca/los_angeles_county/codes/code_of_ordinances?nodeId=TIT22PLZO_DIV2DE_CH22_14DE_22.14.060F)

**A. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)**

- ❑ Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց պարտականությունները կատարել տնից, հանձնարարել անել այդպես: Աշխատանքային գործընթացները վերաձևակերպվում են այնքանով, որքանով դա հնարավոր է՝ մեծացնելու տնից աշխատողների աշխատելու հնարավորությունները:
- ❑ Խոցելի անձնակազմին (65 տարեկանից բարձր և քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող անձինք) նշանակվում է աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից:
- ❑ Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ ժամանակ չգալ աշխատանքի, **կամ մուտք չգործել տարածք** և հնարավորության դեպքում հետևել DPH-ի ինքնամեկուսացման ուղեցույցին:
- ❑ **Մուտքի ստուգումները պետք է** իրականացվեն նախքան աշխատակիցների/**այցելուների** կողմից տարածք մուտք գործելը: Ստուգումը պետք է ներառի հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրամաններին՝ **համաձայն Հանրային Առողջապահության Վարչության Մուտքի Ստուգումների Ուղեցույցի**: Նշված ստուգումները կարող են կատարվել աշխատակիցների ժամանման պահին, **կամ այլընտրանքային տարբերակներով, ինչպես օրինակ՝ առցանց ստուգման համակարգերի, կամ հաստատության մուտքի մոտ փակցված ցուցատախտակի միջոցով, որը կնշի, թե նման ախտանիշներով աշխատակիցները չպետք է մուտք գործեն տարածք**: Աշխատավայրում, հնարավորության դեպքում, պետք է կատարվի ջերմաչափում:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը թույլատրվում է). Եթե անձը չունի ախտանիշ(ներ) և վերջին 14 օրերի ընթացքում չփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, նա կարող է մուտք գործել և մասնակցել այդ օրվան:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը չի թույլատրվում).
    - Եթե վերջին 14 օրերի ընթացքում անձը չփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidquarantine](http://ph.lacounty.gov/covidquarantine):
    - Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը մեկուսանալու: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidisolation](http://ph.lacounty.gov/covidisolation):
- ❑ Բոլոր աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի, կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ՝ [հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության պետական ծրագրերի և COVID 19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների](#) վերաբերյալ, ներառյալ՝ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [Ընտանիքների Կողմից Կորոնավիրուսի Առաջին Արձագանքման Ակտի](#) և աշխատողների փոխհատուցման նպաստների իրավունքները COVID-19-ի աշխատանքի հետ կապված կանխավարկածը՝ համաձայն [Նահանգապետի N-62-20 Գործադիր Հրամանի](#):
- ❑ Տեղեկանալով, որ մեկ կամ ավելի աշխատակիցների, անկախ կապալառուի և/կամ ժամանակավոր աշխատողի թեստի արդյունքը դրական է, կամ COVID-19-ի հետ համընկնող ախտանիշներ ունի, գործատուն պետք է ունենա պատրաստի ծրագիր կամ արձանագրություն այդ անձ(անց)ին տանը

ինքնամեկուսացնելու համար, ինչպես նաև պետք է անհապաղ պահանջվի ինքնակարանտին բոլոր այն աշխատողներից, ովքեր աշխատանքի վայրում շփվել են այդ անձ(անց)ի հետ: Գործատուի ծրագիրը պետք է նախատեսի արձանագրություն, ըստ որի բոլոր կարանտինացված աշխատակիցները կթեստավորվեն, կամ հնարավորություն կունենան թեստավորվելու COVID-19-ի համար՝ որոշելու, թե արդյոք աշխատավայրում եղել են այլ վարակվողներ, որը և կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տե՛ս [աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#) Հանրային Առողջապահության ուղեցույցը:

- ❑ Աշխատավայրում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի վարակման դեպքեր բացահայտելու դեպքում, գործատուն պետք է գեկուցի այս խմբի վերաբերյալ Հանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներով կամ առցանց [www.redcap.link/covidreport](http://www.redcap.link/covidreport): Եթե աշխատավայրում վարակված խումբ հայտնաբերվի, Հանրային Առողջապահության Վարչությունը կնախաձեռնի խմբի նկատմամբ արձագանք, որը կներառի վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Վարակված խմբի հետագոտման գործով կնշանակվի Հանրային Առողջապահության հատուկ աշխատակից՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Այն աշխատակիցներին, որոնք շփվում են հանրության, կամ այլ աշխատակիցների հետ, անվճար պետք է առաջարկվի պատշաճ **դիմակ**, որը ծածկում է քիթն ու բերանը: Աշխատակիցները **պետք է կրեն դիմակները** աշխատանքային օրվա ամբողջ ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Այն աշխատակիցները, որոնք բուժաշխատողի կողմից **դիմակ** չկրելու հրահանգ են ստացել, պետք է կրեն դեմքի վահան, որի ներքևի եզրին շղարշ է ամրացված, որպեսզի համապատասխանեն [Նահանգային Հրահանգներին](#), եթե իրենց վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձև են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներով դիմակներ **չպետք է** օգտագործվեն:
- ❑ Բոլոր աշխատակիցները պետք է մշտապես կրեն **դիմակներ**՝ բացառությամբ փակ դռներով անձնական աշխատասենյակներում միայնակ աշխատելիս, կամ ուտելիս, կամ խմելիս: Այս պահանջը չեղարկում է նախկինում կատարված բացառությունը, որը նախատեսված էր կանգնած վիճակում աշխատակցի հասակը գերազանցող և ամուր միջնապատեր ունեցող խցիկում աշխատող աշխատակիցների համար:
- ❑ Համոզվելու համար, որ դիմակները կրում են հետևողականորեն և ճշգրիտ կերպով՝ աշխատակիցներին խորհուրդ է տրվում չուտել կամ չխմել, բացառությամբ՝ ընդմիջումների ընթացքում, երբ նրանք կարող են ապահով կերպով հանել իրենց դիմակները և ֆիզիկական հեռավորություն պահպանել մյուսներից: Ուտելու կամ խմելու ողջ ընթացքում աշխատակիցները պետք է առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն մյուսներից: Հնարավորության դեպքում նախընտրելի է ուտել կամ խմել դրսում: Խցիկում կամ աշխատակայանում ուտելը կամ խմելը գերադասելի է ընդմիջման սենյակում ուտելուց, եթե խցիկում կամ աշխատակայանում ուտելն աշխատողների միջև ավելի մեծ հեռավորություն և արգելքների առկայություն է ապահովում:
- ❑ Աշխատակիցներին հանձնարարված է, **անհրաժեշտության դեպքում**, ամեն օր լվանալ կամ փոխել իրենց **դիմակները**:
- ❑ Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
  - Նշել առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար

օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը և

- Փոփոխել ընդմիջումների կամ ճաշի ժամերը՝ ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը նվազեցնելու համար, և
- Սեղանները դնել **ուր** ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել կամ ժապավեններ կպցնել նվազեցնելու զբաղվածությունը, հատակների վրա գծանշումներ դնել՝ ապահովելու հեռավորությունը, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց չպետք է համարվի զբաղվածության կրճատմանը և ֆիզիկական հեռավորության պահպանմանը փոխարինող միջոց:
- Հնարավորության դեպքում, ստեղծվել են ընդմիջման բացօթյա տարածքներ՝ հագեցած սովերային ծածկոցներով և նստատեղերով, որոնք աշխատակիցներին հնարավորություն են տալիս մշտապես 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել մյուսներից:
- Բոլոր սեղանները կամ աշխատանքային վայրերը առանձնացված են միմյանցից առնվազն վեց ոտնաչափով:
- Բոլոր ընդմիջումների սենյակները, պետքարաններն ու այլ ընդհանուր վայրերը ախտահանվում են ժամը մեկ՝ հետևյալ ժամանակացույցով.
  - Ընդմիջման սենյակները \_\_\_\_\_
  - Պետքարանները \_\_\_\_\_
  - Այլ \_\_\_\_\_
- Ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում.  
\_\_\_\_\_
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանիչ միջոցները հասանելի են բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում.  
\_\_\_\_\_
- Օձառն ու ջուրը բոլոր աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում.  
\_\_\_\_\_
- Աշխատակիցներին թույլ է տրվում հաճախակի ընդմիջումներ անել իրենց ձեռքերը լվանալու համար:
- Յուրաքանչյուր աշխատողի հատկացված են իրենց սեփական գործիքները, սարքավորումները և սահմանված աշխատանքային տարածքը: Հնարավորության դեպքում, ձեռքում պահվող իրերի (օրինակ՝ հեռախոսներ, պլանշետներ, դյուրակիր համակարգիչներ, սեղաններ, գրիչներ և այլն) համատեղ օգտագործումը նվազագույնի է հասցված, կամ վերացված է:
- Այս ստուգաթերթում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի զբաղվածության պայմաններին վերաբերող քաղաքականությունից, կիրառվում են նաև առաքման անձնակազմի և ցանկացած այլ ընկերությունների նկատմամբ, ովքեր որպես երրորդ կողմ կարող են լինել այդ տարածքում:
- Բոլոր աշխատակիցներին բաժանվել է այս արձանագրության պատճենը:
- Լրացուցիչ (ընտրովի) - Նկարագրել այլ միջոցառումներ.  
\_\_\_\_\_

**B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)**

- Սահմանափակել տարածքում միաժամանակ գտնվող անձանց թիվը, որը թույլ կտա հաճախորդներին/այցելուներին և աշխատակիցներին բոլոր հնարավոր դեպքերում հեշտորեն պահպանել միմյանցից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն:
- Հաստատությունում թույլատրված անձանց առավելագույն քանակը՝ համապատասխան ֆիզիկական հեռավորության պահանջներին՝
- Կանգնեցնել դռան մոտ աշխատակից, ով թույլ չի տա, որ հաստատությունում անձանց առավելագույն քանակը գերազանցվի:
  - o Հաստատությունը կամ տարածքը վերահսկում է բոլոր մուտքերը՝ զբաղվածությանը հետևելու և սահմանափակելու համար: Հնարավորության դեպքում ապահովեք մեկ, հստակ նշանակված մուտք և առանձին ելք՝ ֆիզիկական հեռավորությունը պահպանելու համար:
  - o Պատրաստ եղեք հաճախորդներին/այցելուներին դրսում հերթ կանգնեցնել՝ մինչև ժամանակ պահպանելով ֆիզիկական հեռավորությունը, և ընդհուպ օգտագործելով տեսողական ազդանշանները: Անհրաժեշտության դեպքում **դիմակ** կրող աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե մեկից ավելի մուտքեր ունեն) կարող է կանգնել դռան մոտ, բայց ամենամոտ հաճախորդից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա՝ հետևելու զբաղվածությանը և ուղղորդելու հաճախորդներին/այցելուներին կանգնել շարք մուտքից դուրս՝ միմյանցից վեց ոտնաչափ հեռավորության վրա, եթե հաստատությունը հասել է իր զբաղվածության սահմանին:
  - o Տարածքի անվտանգության աշխատակիցները ակտիվորեն հիշեցնում և խրախուսում են հաճախորդներին/այցելուներին և հասարակությանը պահպանել ֆիզիկական հեռավորության չափանիշները և **դիմակ** կրելու պահանջները, ինչպես նաև հիշեցնում են նրանց, որ տարածքում չի թույլատրվում ուտել և խմել:
- Անհրաժեշտության դեպքում, նստատեղերը վերաձևակերպվում են, որպեսզի ապահովեն, որ բոլոր ներկաները/այցելուները կարողանան պահպանել առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն իրենց և իրենց ընտանիքի անդամ չհանդիսացողների միջև:
- Ընտրովի - Նկարագրել այլ միջոցառումներ:

**C. ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ ԱՌՆՎԱՋՆ ՎԵՑ ՈՏՆԱՉԱՓ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ)**

- Նշաններ տեղադրել հաստատությունից դուրս՝ հիշեցնելով մարդկանց պահպանել միմյանցից 6 ոտնաչափ հեռավորություն, ներառյալ՝ հերթում կանգնած ժամանակ:
- Հաստատության կամ տարածքի ներսում և հանրային մուտքերի քայլուղիներում, որտեղ հաճախորդները հերթ են կանգնում, կաշուն ժապավենով, կամ այլ կերպ, առնվազն 6 ոտնաչափ հեռավորությամբ նշում կատարել և փակցնել զծանշաններ, որոնք կուղղորդեն հաճախորդներին օգտվել նշումներից՝ հեռավորությունը պահպանելու համար:
- Եթե կիրառելի է, առանձնացնել պատվերների տարածքները առաքման տարածքներից՝ կանխելու հաճախորդների/այցելուների կուտակումները:
- Բոլոր աշխատակիցներին/այցելուներին հանձնարարվել է պահպանել առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն հաճախորդներից և միմյանցից, և իրենց տնային տնտեսության անդամ չհանդիսացող

անձանցից, բացառությամբ այն ժամանակ, երբ աշխատակիցները կարող են մի ակնթարթ մոտենալ՝ վճարում ընդունելու, ապրանքներ տալու, ծառայություններ մատուցելու, կամ այլ անհրաժեշտության նպատակով:

- Տրամադրել հստակ նշանակված մուտքեր և առանձին ելքեր, եթե դա հնարավոր է և տեղին է տարածքի համար՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորությունը և աջակցելու ամբոխի վերահսկմանը: Հնարավորության դեպքում դռները պետք է բաց լինեն, եթե դրանք ինքնաբերաբար չեն բացվում և փակվում:
- Եթե կիրառելի է, ֆիզիկական հեռավորության պահպանմանն աջակցելու համար ստեղծել միակողմանի միջանցքներ կամ անցուղիներ:
- Եթե կիրառելի է, ցանկացած վերելակի համար, որը թույլ չի տալիս ուղևորների միջև 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանել, վերելակի տարողությունը սահմանափակվում է միաժամանակ 4 կամ ավելի քիչ անձանցով: Բոլոր ուղևորներից պահանջվում է կրել **դիմակ**: Հաշվի առեք վերելակի չափերը, շենքի հարկերի քանակը և աշխատողների օրական քանակը՝ սահմանելու վերելակի ուղևորներին համապատասխան ֆիզիկական հեռավորության ուղեցույցներ:
- Եթե կիրառելի է, աստիճանավանդակները բացվել են միայն «վերև», կամ միայն «ներքև» երթևեկի համար՝ ավելացնելով աստիճանավանդակների մաքրությունը:
- Ընտրովի - Նկարագրել այլ միջոցառումներ:

#### D. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցնում են այն պահանջի մասին, որ նրանք հաստատությունում, կամ հաստատության տարածքներում գտնվելու ողջ ընթացքում պետք է կրեն **դիմակներ**: Սա վերաբերում է բոլոր մեծահասակներին և 2 տարեկանից բարձր տարիքի երեխաներին: Այն անհատները, ովքեր իրենց բժշկական մատակարարի կողմից հրահանգվել են, որ չպետք է դեմքի դիմակ կրեն, պետք է կրեն այլընտրանքային չսահմանափակող դիմակ՝ ինչպիսին է ստորին **հատվածում կտոր ամրացված դեմքի վահանը՝ համապատասխանելու Նահանգի Հրահանգին**, եթե իրենց առողջական վիճակը թույլ է տալիս: Նախընտրելի է կզակը ծածկող կտորով դեմքի վահանը: **Միակողմանի փականներով դիմակներ չպետք է օգտագործվեն**: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությունն ապահովելու համար պետք է ունենալ **դիմակներ** այն այցելուների համար, որոնք ժամանում են առանց դիմակների:
- Մուտքի ստուգումները** պետք է իրականացվեն նախքան այցելուների, **հաճախորդների**, պայմանագրային աշխատողների, կամ վաճառողների **մուտք գործելը** տարածք՝ համաձայն **Հանրային Առողջապահության Վարչության Մուտքի Ստուգումների Ուղեցույցի**: **Ստուգումը** պետք է ներառի հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողի ստուգում, ինչպես նաև հարցում, թե արդյոք անձը տվյալ պահին ենթակա է մեկուսացման կամ կարանտինի հրամաններին: Նշված ստուգումները կարող են կատարվել անձնապես, կամ այլընտրանքային տարբերակներով, ինչպես օրինակ՝ առցանց ստուգման համակարգերի, կամ հաստատության մուտքի մոտ փակցված ցուցատախտակի միջոցով, որը կնշի, թե որ ախտանիշների դեպքում աշխատակիցները **չպետք է** մուտք գործեն տարածք:
  - Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը թույլատրվում է): Եթե անձը չունի ախտանիշներ և վերջին 14 օրերի ընթացքում չփում չի ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ, կարող է մուտք գործել և մասնակցել այդ օրվան:
  - Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը չի թույլատրվում):

- Եթե վերջին 14 օրերի ընթացքում անձը շփում է ունեցել COVID-19-ով վարակված անձի հետ կամ տվյալ պահին ենթակա է կարանտին պահպանելու հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը կարանտին պահպանելու: Տրամադրեք նրան կարանտին պահպանելու հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidquarantine](https://ph.lacounty.gov/covidquarantine):
- Եթե անձի մոտ դրսևորվում է վերևում թվարկված ախտանիշներից որևէ մեկը, կամ նա տվյալ պահին ենթակա է մեկուսացման հրամաններին, նա չի կարող մուտք գործել և նրան պետք է անմիջապես ուղարկել տուն՝ տանը մեկուսանալու: Տրամադրեք նրան մեկուսացման հրահանգները, որոնք կարելի է գտնել այստեղ՝ [ph.lacounty.gov/covidisolation](https://ph.lacounty.gov/covidisolation):

- ❑ HVAC համակարգը գտնվում է լավ, աշխատանքային վիճակում. հնարավոր առավելագույն չափով օդափոխությունն ավելացվել է: Դիտարկեք դյուրակիր բարձր արդյունավետությամբ օդը մաքրող սարքերի տեղադրումը, շենքի օդային զտիչների հնարավորինս բարձր արդյունավետության արդիականացումը և կատարեք այլ փոփոխություններ՝ գրասենյակների և այլ տարածքների արտաքին օդի և օդափոխության քանակի ավելացման համար: Տե՛ս հանրային առողջության ուղեցույցը, թե ինչպես օպտիմալացնել օդափոխությունը:
- ❑ Անհայում վճարային համակարգերը գործում են կամ, եթե հնարավոր չէ, վճարային համակարգերը մաքրվում են յուրաքանչյուր ժամը մեկ: Նկարագրեք.

Ընդհանուր և բարձր երթևեկության տարածքները և հաճախակի հալոն առարկաները (օր.՝ բազրիքներ, վերելակի հսկողության սարքեր, դռան բռնակներ կամ բռնիչներ, վարկային քարտերի ընթերցիչներ, վերելակի կոճակներ, շարժասանդուղիների բազրիքներ և այլն) վարակազերծվում են աշխատանքային ժամերին՝ յուրաքանչյուր ժամը մեկ՝ օգտագործելով EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ՝ հետևելով արտադրողի օգտագործման ցուցումներին:

- ❑ Աշխատանքային տարածքները և ամբողջ հաստատությունը մաքրվում են առնվազն ամեն օր, գուգարաններն ու հաճախակի հալոն տարածքները/առարկաները մաքրվում են յուրաքանչյուր ժամ: Առևտրի կենտրոնի ժամերը ճշգրտվել են, որպեսզի բավարար ժամանակ տրամադրեն կանոնավոր խորը մաքրման և արտադրանքի համալրման համար:
- ❑ Հասարակական գուգարանները մաքրվում են ժամը մեկ՝ օգտագործելով EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ և հետևելով արտադրողի օգտագործման ցուցումներին՝ հետևյալ ժամանակացույցով.

Հասարակական խմելու ջրի շատրվաններն անջատված են և ունեն ցուցանակներ, որոնք տեղեկացնում են հաճախորդներին անգործունակ լինելու մասին:

- ❑ Հաճախորդները/այցելուները, ովքեր ժամանում են հաստատություն երեխաների հետ, պետք է ապահովեն, որ իրենց երեխաները մնան ծնողի կողքին, խուսափեն դիպչել որևէ այլ անձի, կամ իրենց չպատկանող որևէ իրի, և լինեն դիմակավորված, եթե տարիքը թույլ է տալիս:
- ❑ Հաճախորդներին/այցելուներին հասանելի են պատշաճ ախտահանման արտադրանքները՝ ներառյալ ձեռքի ախտահանող միջոցներ, թղթե սրբիչներ (tissues) և աղբամաններ:
- ❑ Ապահովել անհայում վճարային համակարգեր կամ, եթե հնարավոր չէ, կանոնավոր ախտահանել վճարային համակարգերը: Նկարագրել.

Ընտրովի-Նկարագրել այլ միջոցառումներ (օրինակ՝ միայն տարեցների համար ժամեր տրամադրելը).

**E. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ՆՇԵԼ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆԸ)**

- Այս արձանագրության պատճենը փակցված է հաստատության բոլոր հասարակական մուտքերում:
- Հաստատության կամ տարածքի բոլոր մուտքերի մոտ տեղադրված **ցուցանակները** **այցելուներին, հաճախորդներին, պայմանագրային աշխատողներին, կամ վաճառողներին** հիշեցնում են վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահպանման, մշտապես **դիմակ** կրելու անհրաժեշտության, ձեռքի կանոնավոր լվացման, կամ ձեռքի ախտահանիչ միջոցների օգտագործման կարևորության և տանը մնալու անհրաժեշտության մասին, եթե նրանք իրենց վատ են զգում կամ ունեն COVID-19 ախտանիշներ:
- Ամբողջ հաստատության մեջ կամ տարածքում ցուցանակները հաճախորդներին հիշեցնում են, որ տարածքում չի թույլատրվում ուտել և խմել:
- Ամբողջ հաստատության մեջ կամ տարածքում ցուցանակները հաճախորդներին ցույց են տալիս, թե որտեղ կարող են գտնել ձեռքի ախտահանման մոտակա դիսպանսերը:
- Հաստատության առցանց վաճառակետերը (կայք, սոցիալական լրատվամիջոցներ և այլն) հստակ տեղեկություններ են տրամադրում աշխատանքային ժամերի, պահանջվող **դիմակներ** օգտագործման, սահմանափակ զբաղվածության, ժամադրությունների կամ նախնական ամրագրման, նախնական պատվերի, կանխավճարի, վերցման և/կամ առաքման հետ կապված ցանկացած քաղաքականության և այլ համապատասխան խնդիրների մասին:

**F. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ԲԱՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

- Պետք արանները, որոնք սովորաբար բաց են հանրության համար, պետք է մնան բաց հանրության համար:
- COVID-19-ի դեմ արդյունավետ ախտահանիչ թաց անձեռնոցիկները պետք է դրվեն գնումների սայլերի կամ զամբյուղների մոտ:
- Եթե կիրառելի է, աշխատակիցներին պետք է հանձնարարել յուրաքանչյուր ժամը մեկ ախտահանել սայլերը և զամբյուղները
- Ձեռքերի ախտահանիչ միջոցը, օձառը և ջուրը, կամ արդյունավետ ախտահանիչ միջոցը պետք է հասանելի լինի հանրությանը հաստատության մուտքի մոտ կամ մոտակայքում, ելքի դրամարկղների մոտ և ցանկացած այլ վայրում՝ խանութի ներսում, կամ անմիջապես դրսում, որտեղ մարդիկ ունեն անմիջական փոխազդեցություն:
- Պետք է ախտահանել վճարման բոլոր պորտալները, գրիչները և ստիլուսները ամեն ժամը մեկ:
- Ախտահանել բոլոր հաճախ շփվող մակերեսները ամեն ժամը մեկ:

**G. ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐԱԶԱՓ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

- Առաջնային են դարձել այն ծառայությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն հաճախորդների/այցելուների համար:
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, տեղափոխվել են առցանց:
- Հաստատությունում միջոցներ են ձեռնարկվում ապահովելու համար ապրանքների և ծառայությունների մատչելիությունը այն հաճախորդների/այցելուների համար, ովքեր ունեն շարժունակության խնդիրներ



և/կամ ենթակա են բարձր վտանգի՝ հասարակական տարածքներում:

Ընտրովի- Նկարագրել այլ միջոցառումներ.

Վերոհիշյալ միջոցառումներում չընդգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնց հաստատությունը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության ցանկացած հարցի, կամ մեկնաբանության վերաբերյալ կարող եք կապվել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի  
կոնտակտային  
անուն՝

Հեռախոսահամար՝

Վերջին վերանայման  
ամսաթիվ՝